

ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՋԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամենապատիվ Տ. Եղիշե Պատրիարքին, Երուսաղեմ.
Ամենապատիվ Տ. Շնորհք Պատրիարքին, Ստամբուլ.
Ամենապատիվ Տ. Խաչ Արքեպիսկոպոսին, Բեյրութ.
Բարեխնամ բոլոր թեմական առաջնորդներին:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Ս. Էջմիածնեն, ուրախ սրտով, Ձեզի ավետիսը կբերենք մեր Փրկչի հրաշափառ հարության, ջերմագին մաղթանքով, որ Ս. Գերեզմանեն ճառագայթող լույսը, հլոր ու հաղթական շողա ամբողջ աշխարհի վրա և բոլոր մարդոց սրտերեն ներս, ի պտղավորումն և ծաղկումն ավետարանական սիրո և խաղաղության պատգամներուն, որոնց համար Ինքը Որդին Աստուծո՝ Հիսուս, Գողգոթա բարձրացավ և Իր մահով՝ մահը հաղթեց, որպեսզի մարդիկ ավելի կյանք ունենան, և որպեսզի այդ կյանքը ըլլա ավելի բարի, ավելի արդար ու ավելի երջանիկ:

Մեր հոգին լեցուն այս լույս ուրախությամբ, կաղոթենք Ձեր տիրախնամ թեմի եկեղեցիներու պայծառության և համայն հավատացյալ Մեր զավակներուն արևշատության և անոնց առաքինի ու ապգանվեր գործոց հաջողության համար:

Նաև ողջո՛ւյն և օրհնությո՛ւն Ձեզ, Ձեր Ս. Սեղաններու նվիրյալ հոգևոր սպասավորներուն, թեմական և եկեղեցական վարչությանց և եկեղեցասեր կազմակերպությանց աստվածասեր անդամներուն, որոնք Ձեր շուրջ համախումբ, շեն և անսասան կպահեն Ս. Եկեղեցին, Ձեր բարեխնամ երկրի հյուրընկալ ափերուն վրա:

Հարուցյալ Փրկչի սուրբ և անմահ զորությունը թող Ձեզ բոլորդ պահե պահպանե ամբողջ ու անխռով, սիրով միաբան, որպես որդիք լուսո և ժառանգորդք երկնից արքայության, զի ճշմարտապես «յարեաւ Քրիստոս» և «յարութեամբն իւրով Յեզ զկեանս պարգևեաց»:

Օրհնությամբ՝

ՎԱՋԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Փրկչի հրաշափառ և Ս. Հարության տոնի առթիվ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կրոնական խորհուրդներին, Հայկական բարեգործական ընդհանուր միության կենտրոնական վարչության նախագահ պր. Ալեքս Մանուկյանին (Նյու-Յորք), Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության կենտրոնական խնամակալության մեծահարգ նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերտիգային (Լիսաբոն), Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարանի հանձնախմբի նախագահ պր. Երվանդ Աղաճանյանին (Նյու-Յորք), Աբգարյան ավանդի և Ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Լոնդոն), Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օժանդակ հանձնաժողովին (Բեյրութ), Հարդանանց ասպետների կազմակերպության (Նյու-Յորք), հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց կազմակերպություններին, Մայր Աթոռի բարերարներին և ծանոթ ազգային դեմքերի:

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Մեր Տիրոջ հարության երջանիկ առիթով մեր, միաբանության և համայնքի կողմից կներկայացնենք Ձերդ Սրբության մեր ամենաանկեղծ և հարգալից շնորհավորանքները, մաղթելով Ձերդ Ս. Օծության մշտական քաջառողջություն և Մայր Աթոռին՝ բարգավաճում:

ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐՔ

ԵՐՈՒՍԱՂԵՄ

Սուրբ Զատկի տոնին առթիվ կառաքենք մեր և Պատրիարքությանս հոգևոր դասուն և պաշտոնական մարմիններուն և համայն հավատացյալ հոտին սրտագին շնորհավորությունները և որդիական հարապատ սերը, մաղթելով Մայր Աթոռին անսասանություն և Վեհիդ երջանիկ կատկական տոնակատարություն:

ՇՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐՔ

ՍՏԱՄԲՈՒԼ

Վեհափառ Տեր.

Ս. Հարության տոնին առիթով հաճեցեք ընդունիլ շնորհավորանքս և սրտագին մաղթանքներս Վեհիդ քաջառողջության, արդյունաշատ գործունեության, Մայր Աթոռի անսասանության ու պայծառության համար:

ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԲԵՅՐՈՒԹ

Ամենայն Հայոց Հայրապետի անունով ստացվեցին նաև հարգալից ողջույնքներով և ամենաջերմ սրտով գրված բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ արտասահմանի և ներքին բոլոր թեմերից, թեմական առաջնորդներից, ազգային-եկեղեցական և մշակութային կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից: